# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք 08-ը դեկտեմբեր 2023թ.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Կարեն Մանասերյանը, Սոնա Մարգարյանը, Տիգրան Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Ծովինար Սարգսյանը և Վահե Վարդանյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի խորհրդական Գևորգ Սաքանյանը, օգնական Գառնիկ Խաչատրյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը, աշխատակազմի գլավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը և Անի Հասրաթյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.
*ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 8-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 8-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
5) Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:
6) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
7) Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
8) Քաղաքացի Խորեն Եղյանին հատկացված հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
9) «ԽՆՈՑԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
10) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 93-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
11) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 117-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
12) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին.
***ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի՝

1) 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

ա. համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,

բ. Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Ռազմիկ Գրիգորյանին՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ,

գ. Գետափ բնակավայրի բնակիչ Անի Զաքարյանին՝ 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ.

2) 02.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել հայ-ադրբեջանական սահմանագոտում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի արձակած կրակոցից զոհված զինծառայող Գերասիմ Ավետիքի Առաքելյանի ընտանիքին (Եղեգնաձոր բնակավայր):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1) Համայնքային սեփականություն համարվող հողի օտարումից գոյացած 31 000 000 (երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ գումարը ներառել համայնքային բյուջե՝ հողի օտարումից մուտքեր տողին (տող 6410).

2) Պակասեցնել գործառնական դասակարգման՝

ա. 06 խումբ 3 դաս 1 (ջրամատակարարում և կոյուղու համակարգ ծառայության) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածից 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ,

բ. 11 խումբ 01 դաս 02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որից 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամը հատկացնել ֆոնդային բյուջե և 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը վարչական բյուջե.

3) Ավելացնել՝

ա. գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին՝ 26 000 000 (քսանվեց միլիոն) ՀՀ դրամ՝ Մալիշկա և Գետափ բնակավայրերի ասֆալտապատման աշխատանքների ֆինանսավորման համար, 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 2 234 000 (երկու միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր բնակավայրի Վ. Զորավար փողոցի, Գլաձոր բնակավայրի ասֆալտապատման աշխատանքների և փորձաքննության ծառայության ֆինանսավորման համար,

բ. գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 4 դաս 1 (արտաքին լուսավորություն ծառայության) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 8 216 000 (ութ միլիոն երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր և Գլաձոր բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ֆինանսավորման համար,

գ. գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 6 դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար.

դ. գործառնական դասակարգման բաժին 02 խումբ 5 դաս 1 (պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.

4) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներին (տող 1254) ավելացնել 400 055 (չորս հարյուր հազար հիսունհինգ) ՀՀ դրամ և այն նպատակաուղղել՝ գործառնական դասակարգման 09.1.1 (նախադպրոցական կրթություն) ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականցնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի շրջանակներում վերապատրաստում իրականցնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ն/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և համաձայն «Հայաստանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1–ին հոդվածի պահանջների՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն NN 1-3 հավելվածների:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը՝ հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին.

***ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների և քննարկելով Մալիշկայի վարչական ղեկավար Գարիկ Նազարյանի կողմից ներկայացված առաջարկը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի մշակույթի տան սենյակներից մեկը անհատույց օգտագործման իրավունքով, 5 (հինգ) տարի ժամկետով, տրամադրել «Դավ Սոշլ Արմենիա» բարեգործական հիմնադրամին՝ Մալիշկա բնակավայրում անհատույց գերմաներենի դասընթացներ անցկացնելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.49598 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0378-0005) մակերեսով վարելահողը, Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.01060 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-042-0021-) մակերեսով և Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.01871 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0034-0027) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Լսեցին.

***ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները և քաղաքացի Մովսես Գալստյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Մովսես Սպրիդոնի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.391 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքից (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 29082023-10-0011 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0309-0068) 0.10454 հա-ի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125-Ա/

Լսեցին.

***ՔԱՂԱՔԱՑԻ ԽՈՐԵՆ ԵՂՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 2/փ-384 դրական եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Խորեն Եղյանին հատկացված՝ շինությամբ ծանրաբեռնված 0.0155 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողի (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0058-) նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Լսեցին.

***«ԽՆՈՑԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները և «ԽՆՈՑԻ» ՍՊ ընկերության տնօրեն Համլետ Սարգսյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի «ԽՆՈՑԻ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.28345 հա այլ հող հողատեսքի (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 04102023-10-0008 վկայական, կադաստրային

ծածկագիր՝ 10-042-0158-0109) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածք՝ անասնագոմ կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԹԻՎ 93-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 27-ի՝ «Թավիթիան Վինյարդս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 93-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Տալ համաձայնություն «Թավիթիան Վինյարդս» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1.85303 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 09082022-10-0003 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0307-0035) 0.21 հա-ի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման փոխելու համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 25-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու մասին» թիվ 117-Ա որոշման հավելվածի աղյուսակի 2-րդ կետում «Բնակելի» բառը և «17102023-10-0014» թվերը փոխարինել «Հասարակական» բառով և «21112023-10-0008» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ա/

Լսեցին.

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ը, ժամը 18:00-ն, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ-11 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

Ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՀԱՐՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ*

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Մարինե Հովհաննիսյանը

_____